ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/1646/02/25**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«14» ապրիլի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
զեկուցող Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ Նունե Գաբրիելյանի հայցի ընդդեմ Կամո Պողոսյանի՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, գույքից բաժնեմասն առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում բաժնեմասի արժեքը վճարելու կամ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարը համատեղ սեփականության մասնակիցների միջև նրանց բաժնեմասին համաչափ բաշխելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով դատարան՝ Նունե Գաբրիելյանը պահանջել է լուծել իր և Կամո Պողոսյանի միջև 13.03.1990 թվականի գրանցված ամուսնությունը, ինչպես նաև ճանաչել իր սեփականության իրավունքը համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքերի՝

Երևանի Դավթաշեն Ձոր-2 թաղամասի թիվ 77 տան, Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի ու «Mercerdes-Benz ML 320» մակնիշի թիվ 4JGAB54E41A269322 նույնականացման համարով ավտոմեքենայի 1/2-րդ մասի նկատմամբ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.02.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Քաղաքացիական գործին տրվել է թիվ ԵԴ/5682/02/22 համարը:

Դատարանի 06.09.2023 թվականի «Քաղաքացիական գործի վարույթի մի մասն առանձնացնելու մասին» որոշմամբ ըստ Նունե Գաբրիելյանի հայցի ընդդեմ Կամո Պողոսյանի՝ ամուսնալուծության պահանջի մասին, քաղաքացիական գործի վարույթն առանձնացվել է:

27.11.2024 թվականին Նունե Գաբրիելյանը ներկայացրել է միջնորդություն հայցապահանջի չափն ավելացնելու վերաբերյալ՝ պահանջելով «*Երևան քաղաքի, Դավթաշեն Ձոր-2 թաղամաս 77 տուն հասցեի, Սյունիքի մարզի, ք. Կապան Ա. Մանուկյան փողոցի 1-ին նրբանցք թիվ 47 բնակելի տուն և սպասարկման հողամաս հասցեի անշարժ գույքերից առանձնացնել Նունե Գրիգորիի Գաբրիելյանի 1/2-րդ բաժնեմասերը: Դրա անհնարինության դեպքում Նունե Գրիգորիի Գաբրիելյանին վճարել Երևան քաղաքի, Դավթաշեն Ձոր-2 թաղամաս 77 հասցեի գույքի, ՀՀ Սյունիքի մարզի, ք. Կապան Ա. Մանուկյան փողոցի 2 նրբանցքի թիվ 47 բնակելի տուն և սպասարկման հողամաս հասցեի գույքերի և «MERCEDES-BENZ ML 320» մակնիշի 06 OL 776 համարանիշի ավտոմեքենայի 1/2-րդ բաժնեմասերի արժեքները: Դրամական փոխհատուցում չվճարելու դեպքում Երևան քաղաք Դավթաշեն Ձոր-2 թաղամաս 77 հասցեի գույքը, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան Ա. Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 բնակելի տուն և սպասարկման հողամաս հասցեի գույքը և «MERCEDES-BE ML 320» մակնիշի 06 OL 776 համարանիշի ավտոմեքենան վաճառել հրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով սեփականատերերի միջև՝ նրանց բաժիններին համաչափ*»:

Դատարանը 27.11.2024 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում արձանագրային որոշմամբ բավարարել է Նունե Գաբրիելյանի հայցապահանջի չափն ավելացնելու վերաբերյալ միջնորդությունը:

27.11.2024 թվականին Կամո Պողոսյանը ներկայացրել է թիվ ԵԴ/5682/02/22 քաղաքացիական գործից մաս առանձնացնելու վերաբերյալ միջնորդություն, որով պահանջել է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթն առանձնացնել և այդ գույքի մասով առանձնացված գործը հանձնել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Դատարանը 11.02.2025 թվականի «Քաղաքացիական գործի վարույթի մի մասն առանձնացնելու և այն ըստ տարածքային ընդդատության հանձնելու մասին» որոշմամբ

պատճառաբանելով, որ «*(…) քաղաքացիական գործով ներկայացվել է բացառիկ տարածքային ընդդատություն ունեցող՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան փողոց 1-ին նրբանցք թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ Նունե Գրիգորի Գաբրիելյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին պահանջ, որի բավարարումը կամ մերժումը նաև կանխորոշում է այդ գույքից բաժնեմասն առանձնացնելու, անհնարինության դեպքում արժեքը վճարելու, չվճարելու դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարը սեփականության մասնակիցների միջև նրանց բաժնեմասերին համաչափ բաշխելու մասին պահանջների լուծումը, սույն գործով դեռևս ապացուցման պարտականություն չի բաշխվել, ինչպես նաև գործի քննության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Դատարանը եզրահանգում է, որ առկա են գործի վարույթի մի մասն առանձնացնելու և այն այլ դատարանի քննությանը հանձնելու հիմքեր*»՝ թիվ ԵԴ/5682/02/22 քաղաքացիական գործի վարույթից առանձնացրել է ըստ Նունե Գաբրիելյանի հայցի ընդդեմ Կամո Պողոսյանի՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, գույքից բաժնեմասն առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում բաժնեմասի արժեքը վճարելու կամ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարը համատեղ սեփականության մասնակիցների միջև նրանց բաժնեմասին համաչափ բաշխելու պահանջի մասին, քաղաքացիական գործի վարույթն ու այդ մասով գործն ուղարկել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Քաղաքացիական գործին տրվել է թիվ ԵԴ2/1646/02/25 համարը:

Գործն ստացվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և 04.03.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Ռ. Ահարոնյանին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ահարոնյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 13.03.2025 թվականին որոշում է կայացրել գործի տարածքային ընդդատությունը որոշելու համար թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին հետևյալ պատճառաբանությամբ.

« (…) գտնում եմ, որ ի սկզբանե ներկայացված պահանջներով հայցադիմումը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ, այն նույնիսկ հետագայում ընդդատյա չի դարձել այլ դատարանի և նման պայմաններում գործից մաս առանձնացնելու և այլ դատարան ուղարկվելու որոշում կայացվել չէր կարող:

Հայցվորի ներկայացրած պահանջների վերլուծությունից բխում է, որ վերջինս ներկայացրել է ամուսնությունը լուծելու և ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքի 1/2 մասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներ: Նշված պահանջներից որևէ մեկով բացառիկ ընդդատության կանոններ կիրառելի չեն:

Այն, որ համատեղ ամուսնական կյանքում ձեռքբերված գույքի կազմում կարող են լինել և տվյալ դեպքում առկա են եղել թվով երկու անշարժ գույքեր, ապա դա ամենևին ներկայացված պահանջի ընդդատության հարցի համար որոշիչ դերակատարում ունենալ չի կարող: Հայցվորի պահանջը վերաբերում է ոչ թե կոնկրետ գույքերի, այլ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքերին՝ որպես «հավաքական գույք»: Նման դիրքորոշումս հիմնված է այն տրամաբանության վրա, որ հակառակ մեկնաբանմամբ կստացվի, որ եթե օրինակ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքերը լինեն մի քանի տասնյակ անշարժ գույքեր և գտնվեն տարբեր մարզերում, ապա դրանցից յուրաքանչյուրի մասով պետք է հայցեր ներկայացվեն տարբեր դատարաններ, ինչը ոչ միայն իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց չէ, այլև դատավարության կողմերին զրկում է ամուսնության ընթացքում ձեռքբերված բոլոր գույքերի վերաբերյալ մեկ վարույթի շրջանակում օրինակ համաձայնության գալու հնարավորությունից: Ընդ որում, եթե յուրաքանչյուր գույքի մասով տարբեր ընդդատություններ լինեն, կստացվի, որ դրանք առանձին ոչ դրամական պահանջներ են և յուրաքանչյուրի համար վճարման ենթակա կլինի պետական տուրքի գումար, մինչդեռ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքերի 1/2 մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի համար ենթակա է վճարման ընդհանուր մեկ ոչ դրամական պահանջի համար սահմանված չափով պետական տուրքի գումար՝ անկախ գույքերի քանակից: Ընդ որում, սույն դեպքում նույնպես հայցվորն ի սկզբանե վճարել է 40.000 ՀՀ դրամ, որից 20.000 ՀՀ դրամը՝ ամուսնությունը լուծելու պահանջի համար, իսկ 20.000 ՀՀ դրամը՝ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքի ½ մասի նկատմամբ իրավունքը ճանաչելու պահանջով:

Գտնում եմ, որ հայցվորի ներկայացրած պահանջն իր բնույթով չի հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված բացառիկ ընդդատության պահանջ, քանի որ հայցի առարկան ըստ էության ոչ թե անշարժ գույքն է, այլ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքը՝ որպես «հավաքական գույք» (…):

Բացի վերոգրյալը, գտնում եմ, որ ընդդատության վերաբերյալ իմ հետևությունները պետք է դիտարկել նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի կարգավորումների լույսի ներքո: (…) այդ կարգավորումները եթե ոչ ուղղակի, ապա նվազագույնն անուղղակի կերպով սահմանում են, որ ամուսինների ընդհանուր գույքի հետ կապված հարցերը կարող են քննարկվել (իսկ գործնականում հենց բոլոր գույքերի հարցը մեկ վարույթում քննվել է միակ արդյունավետ միջոցը) մեկ վարույթի շրջանակում»:

Թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 07.04.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործի ընդդատության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի

դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցը ներկայացվում է հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել նույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից բխում է, որ Դատարանը յուրաքանչյուր պարագայում, անկախ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պատասխանողի առարկության առկայությունից, գործն ուղարկում է ըստ տարածքային ընդդատության, եթե հայցադիմումը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Բացառիկ տարածքային ընդդատություն» վերտառությունը կրող 24-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ: Միաժամանակ, հայցադիմումն ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված լինելու պարագայում դատարանը գործը կամ դրա մի մասը չի կարող ուղարկել ըստ տարածքային ընդդատության, եթե անգամ այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ

դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի տարածքային ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վճռաբեկ դատարանը նախ անհրաժեշտ է համարում պարզել Նունե Գաբրիելյանի կողմից ի սկզբանե ներկայացված պահանջների բնույթը և ըստ այդմ՝ թիվ ԵԴ/5682/02/22 քաղաքացիական գործն ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելու հանգամանքը:

Այսպես՝ Նունե Գաբրիելյանը սկզբնապես ներկայացված հայցադիմումով պահանջել է լուծել իր և Կամո Պողոսյանի միջև կնքված ամուսնությունն ու ճանաչել իր սեփականության իրավունքը համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքերի 1/2-րդ մասի նկատմամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան օրենսդրությունը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են սույն օրենսգրքի 197 հոդվածի կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնելու միմյանց հետ կապված մի քանի պահանջներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առանձին վարույթներում առանձնացնելու միացված պահանջներից մեկը կամ մի քանիսը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, (...) ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն (…) ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ **ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝ ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը**:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ դատական կարգով ամուսնալուծության վերաբերյալ հայցադիմում ներկայացնելիս այն ներկայացնող ամուսինն իրավունք ունի նույն հայցադիմումով ներկայացնելու նաև ամուսնության ընթացքում ձեռք բերված և ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու պահանջ, ընդ որում՝ անկախ ամուսինների ընդհանուր գույքային զանգվածում այս կամ այն գույքի շարժական կամ անշարժ լինելու հանգամանքից: Հայցադիմումում նման պահանջներ միացված լինելու դեպքում դատարանն ամուսնալուծության հարցը լուծելու հետ մեկտեղ պարտավոր է անդրադառնալ նաև ամուսինների ընդհանուր գույքի բաժանման հարցին՝ որպես կիրառելի իրավական

նորմեր դիտարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 199-րդ և 201-րդ հոդվածները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է նույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով (...) սահմանված առանձնահատկությունները:

Նման իրավակարգավորման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամուսնալուծության և ամուսինների ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի բաժանման վերաբերյալ պահանջներով գործերի ընդդատության, գործը (դրանից առանձնացված մասը) ըստ տարածքային ընդդատության ուղարկելու հարցերը պետք է լուծվեն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթների հաշվառմամբ:

Սույն դեպքում Նունե Գաբրիելյանի հայցապահանջը, անկախ հայցադիմումում, իսկ ապա նաև հայցապահանջի չափն ավելացնելու վերաբերյալ միջնորդության մեջ դրա ձևակերպումից, ի սկզբանե ուղղված լինելով ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի բաժանմանը, չի կարող դիտարկվել որպես գույքի առանձին միավորների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջ, որի նկատմամբ կիրառելի են բացառիկ տարածքային ընդդատության կանոնները: Ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը (գույքային զանգվածը) բաժանելու մասին ամուսնու պահանջը, հիմքում ունենալով այդ գույքը (գույքային զանգվածը) ամուսնության ընթացքում ձեռք բերված լինելու փաստը, իր մեջ կլանում է այդ գույքային զանգվածի մեջ մտնող յուրաքանչյուր միավորի նկատմամբ օրենքի ուժով ընդհանուր սեփականության իրավունք ձեռք բերված լինելու փաստը հաստատելու (ճանաչելու) և այն ամուսինների միջև բաժանելու պահանջները՝ հադես գալով որպես մեկ միասնական իրավական պահանջ, որը որևէ պարագայում չի կարող նույնանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների հետ, որոնց համար օրենսդիրը սահմանել է բացառիկ տարածքային ընդդատություն՝ ըստ հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անկախ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքային միավորների քանակից և որակական հատկանիշներից, դրանք՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն դիտարկելու և սահմանված կարգով ամուսինների միջև բաժանելու համար դատարանների կողմից պարզման ենթակա փաստական հանգամանքները մեծամասամբ համընկնում են, հետևաբար նման բազմաօբյեկտ պահանջը մեկ վարույթում քննելը բխում է արդարադատության արդյունավետության և դատական խնայողության սկզբունքներից: Հակառակ մեկնաբանության պարագայում յուրաքանչյուր գույքի կապակցությամբ տարածքային

ընդդատությանը վերաբերելի հատուկ կարգավորումների կիրառելիության պարագայում կառաջանա անհրաժեշտություն յուրաքանչյուր գույքի կապակցությամբ հայցադիմում հարուցել տարբեր դատարաններում, որպիսի իրողությունն անհարկի կծանրաբեռնի ինչպես դատական համակարգը, այնպես էլ հավելյալ դատավարական պարտականություններ կառաջացնի գործին մասնակցող անձանց համար:

Վերոգրյալի համալիր վերլուծության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամուսնալուծության պահանջի հետ ներկայացված՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը ամուսինների միջև բաժանելու մասին պահանջի նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառիկ տարածքային ընդդատության կանոնը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Նունե Գաբրիելյանի կողմից ի սկզբանե ներկայացված հայցադիմումը վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ, հետևաբար բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանը՝ հայցադիմումը բացառիկ տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելու հանգամանքը, որի առկայության դեպքում միայն Դատարանն իրավասու կլիներ գործն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործն ըստ Նունե Գաբրիելյանի հայցի ընդդեմ Կամո Պողոսյանի՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, գույքից բաժնեմասն առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում բաժնեմասի արժեքը վճարելու կամ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարը համատեղ սեփականության մասնակիցների միջև նրանց բաժնեմասին համաչափ բաշխելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/1646/02/25 քաղաքացիական գործն ըստ Նունե Գաբրիելյանի հայցի ընդդեմ Կամո Պողոսյանի՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի անշարժ գույքի 1/2-րդ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, գույքից բաժնեմասն առանձնացնելու, իսկ դրա

անհնարինության դեպքում բաժնեմասի արժեքը վճարելու կամ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարը համատեղ սեփականության մասնակիցների միջև նրանց բաժնեմասին համաչափ բաշխելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

Զեկուցող ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ